

զանի վերայ, խառուցի, էնպէս էդա ասկեարըն սկօն յըմեն
կը խճղը:

Դաւիթ տիսաւ էդա անագին ասկեար, էնքան չատը.
էդա ջանդակնիր սկուն կօլօնուան, շշկուաւ:

185. Զին յիմացաւ Դաւիթ շշկուաւ, չգտի թէ ուր թալի
— Դաւիթ, էսաց, էնչքան քեօ թուր կառի, էնքան իմ
վաւտաց յիռջի կը մեռնին:

Էնչքան քեօ թուր կը կառի, էնքան իմ պուշի մողիը
կսպանին:

Էնչքան քեօ թուր կտրի, էնքան իս իմ բերնով կոպա-
նիմ. չընը վախենաս, կռիւ էրա:

186. Դաւիթ սկօն կռիւ կէնի. իսս չէցգի:

Էրկու գլեօխ էլ կերթայ, կգեայ:

Էլի ձին կիմանայ Դաւիթ շշկուաւ:

Զին Դաւթը մօտէն ըռըկաւ, գնաց. ասկեարի օրթալաղ¹
տեղ կանգնաւ:

187. Զին կանգնաւ, էլ մարդ չսպանը:

Վուր ձին կանգնաւ. էնքան ասկեար թափան Դաւթը
վերայ, համա կը զանին:

Փէտով կը զանին, քարով կը զանին, թրով կը զանին:

Էնու շուրիը թուր չը կառի:

Զընճըլ կը թլին ձեռու վրէն, թիվըր կայիմ կը կապին:

Դաւիթ էն տե շատ խեղճ կըլնը: Զին էլ ըսկի ձէն չը տայ:

188. Յեօվան գըշիը կըլնը գիւս, կը տիսնայ Դաւթը աստ-
ղը մօտուաղը² և, կերթայ տուն կըսի. — Կնիկ, ըլի, ճրագ էրա.
Դաւթը աստղը մօտուաղը և. Դաւիթ շատ նեղ տեղն և:

Կնիկ կըսի. — Տնաւէր, Դաւիթն էլ նեղ տեղն կընկնը. էն
էնչ գիւ տսիր, իս հաւատացիմ:

189. Պո՛, խրեօխպէր և, սըրա վերայ կը ցաւի, մէկէլ կը
վազի գիւս. կը տիսնայ տահա³, քեանի կերթայ Դաւթը աստ-
ղը կը մօտուաղի:

190. Մ կէլ կգեայ տուն, կըսի. — Կնիկ, կնիկ, էլի, ճրագ
էրա:

Կնկեան վերայ զօռ կէնի. կնիկ կըլնի, ճրագ կէնի:

Խիտ Յեօվանի կռիւ կէնը. — Դիւ չըն թուղնը, քընիմ:

— Ախր ուտար աղչըկ իս, քիւ սըրա չը ցաւը. ախր իմ
էրուն և, իմ սըրա կը ցաւը:

191. Յեօվան կըլնը, կերթայ ձիանքտիրու մէջ:

1 Թրք. = Միջավայր, մէջտեղ: 2 Խաւարիլ, վանեցիք ասում են
սմղկաեմլ. 3 Թրք. = Էլ աւելի: